

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին

կատարած աշխատանքների

ԵՐԵՎԱՆ 2016

Կազմող՝ ԱՆԻ Արդության
Հայաստանի ազգային գրադարանի գիտնական
քարտուղար (ժ.պ.)



«Գիրք» հրատարակչություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

2015 թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանի ազգային գրադարանում 2015 թ. հաշվետու տարում կատարվել են առաջնային խնդիրների լուծման հետևյալ աշխատանքները

1. Գրադարանային հավաքածուի համալրում , տեղեկույթի սպասարկում և պահպանում

Համաձայն ՀՀ մշակույթի նախարարի 2014 թ. փետրվարի N 47-Ա «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի ռուսալեզու գրադարանային ֆոնդերի հաշվառման գործընթացը ուսումնասիրելու մասին» հրամանի, ըստ ժամանակացույցի ավարտվել են՝ «Համալրման», «Գրքափոխանակության», «Մատենագիտության և գիտական հետազոտությունների», «Սպասարկման», «Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման», «ՀՀԱԳ», «Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների», «Նոտային-երաժշտական գրականության» բաժինների ռուսերեն հավաքածուների վերահաշվառումը: Վերահաշվառման աշխատանքները շարունակվում են Գլխավոր գրապահոցում (տես աղյուսակ 1-ում):

ՀԱԳ հավաքածուն 01.01.2016թ. դրությամբ կազմում է 6.418.893 միավոր, որից գործող հավաքածուն՝ 6.163.708 միավոր, պահուստային հավաքածուն՝ 117.918 միավոր, գրքափոխանակության հավաքածուն՝ 137.267 միավոր:

2015թ. ՀԱԳ հավաքածուները համալրվել են 39.179 միավորով, որից սուբսիդիայի հաշվին՝ 4.229 միավորով, նվիրատվությամբ՝ 26.402 միավորով, միջազգային գրքափոխանակությամբ՝ 1085 միավոր, հայաստանյան գրքափոխանակությամբ՝ 212 միավոր: Պարտադիր օրինակների քանակն է՝ 6.609 միավոր, այլ աղբյուրներ՝

642 միավոր, որից 640-ը՝ ՀԱԳ հրատարակություններ, իսկ 2-ը՝ կորած գրքերի ակտ (տես նկ. 1): Նաև տես (աղ.2) :

2015թ. ընթացքում հավաքածուների համալրումը կատարվել է «Amazon», «Catawiki», «AbeBooks» էլեկտրոնային գրավաճառ ցանցերի, «Բուկինիստ», «Բյուրոկրատ», «Արտբրիջ», «Հայ գիրք», «Նոյան տապան» գրախանութների, հրատարակչությունների և անհատների միջոցով, որի արդյունքում ձեռք է բերվել և ՀՀԱԳ բաժնի հայագիտական հավաքածու է մուտքագրվել 958 անուն հայագիտական գրականություն, որից ռուսերեն՝ 180 միավոր և օտար լեզուներով՝ 36 երկրից, 20 լեզուներով, 778 միավոր գրականություն: Ստացումներից 14 միավորը ֆաքսիմիլե տարբերակներ են, 1 միավորը՝ պատճենահանում:

Գլխավոր գրապահոցի օտարալեզու գրականության ենթաբաժնում պահպանվող արևելագիտական հավաքածուի վերաբաշխման աշխատանքները կազմակերպելու համար հանձնաժողով ձևավորելու նստին հիմք ընդունելով ՀՀ նշակույթի նախարարի 2003 թվականի փետրվարի 5-ի N 83-րդ հրամանով հաստատված «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության 36-րդ կետի «ժ» ենթակետը և կազմակերպության տնօրենության նիստի 2015 թվականի ապրիլի 13-ի N 1-ի արձանագրությունը՝

2015 թվականի մայիսի 4-ից գլխավոր գրապահոցի օտարալեզու գրականության ենթաբաժնում պահպանվող արևելագիտական հավաքածուն վերաբաշխվել է ներքոգրյալ կարգով:

ա) Հայագիտական բնույթի առաջին օրինակները սահմանված կարգով հանձնվեն հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժնին և ձուլվեն հայագիտական Armenia հավաքածուին:

բ) երկու և ավելի օրինակները վերագրանցվեն համալրման բաժնում 2015 թվականի մայիսի 4-ին ստեղծված չափսահամարային լրացուցիչ գույքամատյանում և տեղադրվեն գլխավոր գրապահոցի օտարալեզու գրականության ենթաբաժնում չափսահամարային դասավորությամբ:

2015թ. գրանցված խոշոր նվիրատուներից գրադարանը համալրվել է հետևյալ գրականությամբ.

ԱՄՆ-ից՝ Արևելյան թեմից՝ 191անուն/199 միավոր:

Յրաչ Ձադոյանից /ԱՄՆ/, որի նվիրաբերած գրականությունը 1170 արկղ է, 2015թ. նուտքագրվել է 78 արկղ, 1635 միավոր,

Յովսեփ Նալբանդյանից /ԱՄՆ/՝ 83 միավոր/50 անուն, որից նոր անուն-20 միավոր, Ռուսինահայ միությունից /Վարուժան Ոսկանյանի միջոցով՝ 55անուն/109 միավոր, Ռուսինհայում ՅՅ դեսպանատնից՝ 61 միավոր Լիբանանի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունից /Լիբանանում ՅՅ դեսպանատան միջոցով/՝ 100 միավոր,

Թորոս Թորանյանից /Լիբանանում ՅՅ դեսպանատան միջոցով՝ 43 միավոր,

Ձավեն Մսրըյանից /Լիբանանում ՅՅ դեսպանատան միջոցով՝ 32 միավոր:

ԼՂԿ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Յրանտ Ալեքսանյանից և Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրման կենտրոնի տնօրեն Լուսինե Մարգարյանից համատեղ՝ 126 անուն/236 միավոր, /նոր անուն -34 միավոր և մեկ օրինակի լրացում - 19 անուն/:

2015թ. Յայաստանի ազգային գրադարանը, որպես մշակութային արժեք ներկայացնող կենտրոն ստացել է նաև հնատիպ և հազվագյուտ գրականություն: Յնատիպ, հազվագյուտ գրականության ենթաբաժին է հանձնվել 29 միավոր, որից հայերեն - 13, ռուսերեն-7, օտար լեզվով-6, հայատառ թուրքերեն-3 միավոր: Տրվածներից 7 միավորը նոր անուն է /1մ.-հնատիպ, 4մ.(1801-1850թթ.), 2մ.-հազվագյուտ/: Յնատիպ, հազվագյուտ գրականությունը հիմնականում ձեռք է բերվել զննան միջոցով, իսկ 4մ՝ /1-հնատիպ, 2մ.(1801-1850թթ.)/ եղել է նվիրատվություն ժակ Դերմենջյանից /Յրանսիա/ : Աղյուսակ 3-ում ներկայացված են հայերեն հնատիպ ձեռքբերված գրքերը:

Գրատպության թանգարանի համար ձեռք է բերվել 24 անուն /25 միավոր/ նյութեր: Դրանք են՝

Ազդագրեր /աֆիշաներ/- 5 մ.՝ /Նվեր Ավո Յովհաննիսյանից/,

Գիրք- 6մ. /5-զնուն, 1-Նվեր ԱՄՆ-ից/

զլոբուս -2մ.՝ 1900 և 1910թթ., /զնուն /,

դիդակտիկ նյութ՝ աշխարհի դրոշների հավաքածու 1մ./1749թ./, /զնուն/,

Թանգարանային առարկաներ՝ 4մ. /2մ.-գրքի փայտյա հենակներ, 1մ.-աթոռ՝ գնում արտասահմանից, 1մ.-«Շեղելի ժամանակագրությունը» Գրքից մի թերթ-1493թ: Նվեր Տ. Ջարգարյանից/,

Կլիշե /լիտոգրաֆիկ քար/– 1մ. /Գնում /,

Հրավիրատոմս -1 մ.

Քարտեզներ՝ 5մ.-1843թ., 1790թ., 1720թ., 1540-ական թթ. /գնում աճուրդներից/:

Ազգային գրադարանի վերջին հնգամյակի՝ 2010-2015թթ. համալրման ցուցանիշների համեմատական պատկերն ըստ ձեռքբերման աղբյուրների ներկայացված է նկ. 2-ում:

2015 թ. ստացումներն են 39.179 միավոր, որից հայերեն՝ 23.546 միավոր, ռուսերեն՝ 7.685 միավոր, անգլերեն՝ 3.928, ֆրանսերեն՝ 485 միավոր, գերմաներեն՝ 511 միավոր, իտալերեն՝ 16 միավոր, իսպաներեն՝ 8 միավոր և այլ (լեհերեն, հունարեն, հունգարերեն, նորվեգերեն, շվեդերեն, ուկրաիներեն, ռումիներեն, սլովեներեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն) լեզուներով՝ 3000 միավոր: Համեմատելով 2014 և 2015 թթ. ստացումներն ըստ լեզուների նկատում ենք, որ 2014 թ. հայերեն լեզվով ստացումները 1.518 միավորով ավելի շատ են, քան 2015 թ. հայերեն լեզվով ստացումները (տես նկ. 3) :

Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2012թ. նոյեմբերի 29-ի N 1509-Ն «Հայաստանի Հանրապետության գրադարանների միասնական մատենագիտական համահավաք գրացուցակի ստեղծման կարգը սահմանելու մասին» որոշման հավելվածով սահմանված Կարգի I մասի 4-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ը համակարգում և ձևավորում է համահավաք գրացուցակը: Գրացուցակի ձևավորմանը մասնակցում են 10 մարզային գրադարաններ ALEPH ծրագրով մուտքագրումներ կատարելու համար: Բոլորն ապահովված են ծրագրային փաթեթով: Այդուհանդերձ 4 և նկ. 4-ում ներկայացված են 2015թ. համահավաք գրացուցակում մարզային գրադարանների մուտքագրումները:

Աշխատանք է տարվել արտասահմանյան գրադարանների էլեկտրոնային շտեմարաններից գրքերի ներբեռնման կամ հղումով միացման ուղղությամբ: Այդ կայքերն են՝ <https://archive.org/> ,

<http://books.google.com>, gallica.bnf.fr, <http://www.ulb.uni-bonn.de>,
<http://www.digitale-sammlungen.de>, <https://www.hathitrust.org/>

2015 թ. սեպտեմբերի 24-26-ը Քաֆեսճյան արվեստի կենտրոնում շարունակելով ավանդույթը Հայաստանի ազգային գրադարանը հասարակությանը ներկայացավ ArmBookExspo երկրորդ ցուցադրությամբ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում ընդգծվում է նմանատիպ ցուցադրության կազմակերպելու անհրաժեշտությունը, քանզի հայ ժողովրդի պատմական հիշողությունը ամփոփված է առաջին հերթին գրքերի մեջ:

Ներառված են՝

Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակված գրքեր՝ տարբեր ժամանակագրական շեշտադրումներով

Արտերկրում հրատարակված հայագիտական գրքեր՝ 1990 թվականից առ այսօր

Հայաստանում և Արցախում հրատարակված գրքեր՝ 2012 թվականից առ այսօր

Քաֆեսճյան արվեստի կենտրոնում ներկայացվել է շուրջ 5800 միավոր գրականություն՝ 52 երկիր, 32 լեզուներով, որոնցից շուրջ 2800-ը հրատարակված էր Հայաստանում և Արցախում: Ցեղասպանության թեմայով ընդգրկվել էր 2275 միավոր գիրք: Հաշվի առնելով Քաֆեսճյան արվեստի կենտրոնի սահմանափակ տարածքը՝ ցուցադրվել է շուրջ 2000 գիրք, իսկ ներառված ողջ գրականությունը ներկայացվել է <http://www.armbookexpo.am/> կայքում՝ համապատասխան մատենագիտական նկարագրությամբ, հայերեն և անգլերեն:

«Բարձրագույն որակավորման հանձնաժողովի» հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգի գործունեությանը աջակցելու նպատակով ՀԱԳ-ը 2015 թ. ընթացքում թվայնացրել է 1056 անուն ատենախոսություն: Արդեն սկսված է «Հայաստանի ատենախոսությունների համահավաք պահոցի» ձևավորումը, որը հասանելի է օգտատերերին բաց մատչելիության սկզբունքով:

ՀԱԳ-ի կողմից իրականացվում է գրքափոխանակություն ՀՀ, ԼՂՀ և արտերկրի գրադարանների, կազմակերպությունների և անհատների հետ:

Հնատիպ գրքերի հավաքածուից իրականացվել է 11 միավոր գրքերի վերականգնում մատենադարանում և մշակութային նշանակության հավաքածուից՝ 87 միավոր գրքի կազմի և էջերի վերականգնումը: Նաև կատարվել է գրականության 21.570 թերթի ախտահանում և մանրէազերծում:

Կատարվել է գրադարանային հավաքածուից 23.340 թերթ միավորի վերականգնումը: Ձեռք է բերվել 45 միավոր խոսող (audio) գիրք՝ տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար և կազմակերպվել է դրանց սպասարկումը:

ՀԱԳ-ը անդամակցում է «CENL», «IFLA», «BAE» միջազգային կազմակերպություններին:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի՝ «Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում» գերակա խնդիր, Հայաստանի ազգային գրադարանը որպես գլխադասային կազմակերպություն իրականացնում և համակարգում է «Հայ պարբերական մամուլ» և «Հայ գիրք» համահավաք շտեմարանների ձևավորումը:

01.01.2016թ. դրությամբ ունենք պարբերականների թվայնացված 662 անուն՝ 1.486.456 էջ (թերթ՝ 292 անուն՝ 257.958 էջ, հանդես՝ 370 անուն՝ 1.228.498 էջ): Թվայնացման վիճակագրությունը բերված է նկ. 5-ում և նկ. 6-ում:

«Հայ պարբերական մամուլ» շտեմարանում առ 01.01.2016 թ. տեղադրվել է 2.120 պարբերականի մատենագիտական գրառում: 2015 թ. 344 անուն պարբերականների էջերի ընդհանուր թիվը կազմում է 454957 էջ, որից 106 անուն լրագիր՝ 191.198 թվանշանացված էջ և 176 անուն հանդես՝ 263.759 թվանշանացված էջ:

Ավարտվել են «Հայ տպագրության 500 ամյակ» էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքները:

Շարունակվում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքները: Կատարվել է 13.820 անուն մատենագիտական գրառում և 1010 գրքի լրիվ տեքստային թվային պատճենի տեղադրում:

2. Հայաստանի, արտերկրի գրադարանների և հայագիտական կենտրոնների հետ զարգացնել ռազմավարական համագործակցություն

2015 թ. հոկտեմբերի 12-24-ը գրադարանում անցկացվեցին արդեն ավանդական դարձած եռօրյա դասընթացները՝ «Վարպետաց դասերը»: Դասընթացների թեմաներն էին՝ «Գրքափոխանակության խնդիրները», «Amazon», «eBay» գրավաճառ ցանցեր, «Հեղինակավոր գրառումներ», «Առարկայական խորագրեր», «Մեքենաընթեռնելի քարտագրում MARC 21 ձևաչափով», «Ընթերցանության կազմակերպումը պատանիների և երիտասարդների շրջանում», «Գրադարանավարի վարվելակերպի կուլտուրան դեռահասների հետ աշխատանքները կազմակերպելիս», «Գրադարանային փաստաթղթերի պահպանություն և սպասարկում», «Գրադարանային փաստաթղթերի վերականգնում և ամրակայում», «Ժամանակակից գիտական տեղեկատվական համակարգեր», «Հայաստանի գրադարաններում շահագործվող հանրային օգտագործման առցանց քարտարանների ներկայացում/ KOHA, ALEPH, Evergreen», «Թվային գրադարանների առանձնահատկությունները և դրանց ստեղծման նախադրյալներն», «ՀՀ գրադարանային օրենսդրությունը. Ենթաօրենսդրական ակտեր», «Հայկական գիտահետազոտական պահոցի ներկայացում», «Գրադարանային համակարգի գործունեության կազմակերպում և ղեկավարում», «Գրադարաններ և սոցցանցեր», «Գրադարանային տեղեկատու-որոնողական ապարատի կազմակերպումը և սպասարկումը էլ. Շտեմարաններ», «Գրադարանային դասակարգում»: Գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին մասնակցեցին 100 գրադարանավար ՀՀ բոլոր մարզերից: Դասընթացները վարեցին Հայաստանի ազգային գրադարանի, ՀԱՀ Փափագյան գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի, ԽՆԿՈ-Ապոր անվ. մանկական գրադարանի մասնագետները: Դասընթացների ավարտին տրվեցին հավաստագրեր:

Տարվա ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը շրջիկ գրադարանով այցելել է ՀՀ 5 մարզերի 7 տարածաշրջաններ՝ Արագածոտնի մարզ՝ Արագածի տարածաշրջան,

Շիրակի մարզ՝ Արթիկի տարածաշրջան, Գեղարքունիքի մարզ՝ Գամբարակի տարածաշրջան, Մարտունու տարածաշրջան, Լոռու մարզ՝ Թունանյանի տարածաշրջան, Գուգարքի տարածաշրջան, Սյունիքի մարզ՝ Մեղրու տարածաշրջան: Այցերի ընթացքում նվիրաբերվել է 3775 միավոր գրականություն: Հանդիպումների ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի մասնագետները համայնքային գրադարանների գրադարանավարների հետ անց են կացրել սեմինար-խորհրդակցություններ գրադարանային խնդիրների շուրջ:

Մարզային գրադարանավարները գրառումներ են կատարում ALEPH Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակում:

ՀԱԳ-ը իր անպային միջավայրով մարզային գրադարաններին է ուղարկում սքանավորված պարբերական մամուլի էջեր: Մարզային գրադարանավարները մշակում և նույն տիրույթով ուղարկում են ազգային գրադարան:

3. Ձևավորել երկարաժամկետ համագործակցություն գրադարանների, պետական և դոնոր կազմակերպությունների հետ

2012-2015թթ. ընթացքում կնքվել են մի շարք համագործակցության փաստաթղթեր, այդ թվում՝

Միջազգային համագործակցություն

Ռուսաստանի ազգային գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Չեխիայի հանրապետության ազգային գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Ռումինիայի ազգային գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Բելյուսի Հայկազյան համալսարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Բեռլինի պետական գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Կոպենհագենի թագավորական գրադարանի և ազգային գրադարանի միջև:

4. Հրատարակչական գործունեություն, ընթացիկ միջոցառումներ և վերանորոգման աշխատանքներ

2015թ. Հայաստանի ազգային գրադարանը սկսեց «Հայերի մասնակցությունը հայրենական Մեծ պատերազմին» էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները, որը ներառում է թեմայի վերաբերյալ գրված գրքեր, հոդվածներ, լուսանկարներ և պլակատներ: Ներառված նյութի տեսակներն են՝

Գիրք-2 անուն

Ամսագիր-2 անուն 2 հոդված

Թերթ- 5 անուն 399 հոդված

Լրատվական կայքեր- 5 կայք 5 նյութ

Լուսանկար- 12 նյութ

Պլակատ- 18 նյութ

2015թ. սեպտեմբերից սկսվել են նաև «Արցախյան շարժում» էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները: Շտեմարանը ներկայացնում է 1988-ից առ այսօր հրատարակված պարբերականների նյութերը: Ներառված նյութի տեսակներն են՝

Գիրք-1 նյութ, թերթ-101 նյութ/101 էջ, ամսագիր-30 նյութ-79 էջ, լուսանկար-1 նյութ:

Համալրվել է «Ցեղասպանությունն օտար աղբյուրներում» էլեկտրոնային շտեմարանը անգլերեն և ֆրանսերեն հոդվածներով՝ 1712 հոդված, 1733 թվայնացված էջ:

2015թ. փետրվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում համալրվել է «Տպարաններ» էլեկտրոնային շտեմարանը, որտեղ մուտքագրվել են տեղեկություններ 60 տպարանների մասին:

Շարունակվել են աշխատանքները «Արև» պարբերականի էլեկտրոնային շտեմարանի հետ, մուտքագրվել է 14.217 հոդված:

Շտեմարանում ընդգրկված հոդվածների թիվն առ 31.12.2015թ. կազմում է 56.150:

«Մամուլի հոդվածներ» էլեկտրոնային շտեմարանում մուտքագրվել է 21.499 հոդված, կատարվել է շտեմարանի խմբագրում 8.768 հոդված: 2014-2015թ. հոդվածների թիվը կազմում է 38.562:

Ավարտված է 1801-1850 թթ. գրքերի թվանշանացումը և տեղադրումը «Հայ գիրք» շտեմարանում:

«Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (մինչև 1800թ.)» - *Oratio dominica plus centum linguis, versionibus aut characteribus reddita* (1700թ., 323 էջ), *Oratio dominica in diversas omnium fere gentium linguas versa et propriis cujusque linguae characteribus expressa. Una cum dissertationibus nonnullis de linguarum origine, variisque ipsarum permutationibus* (1715թ., 81 էջ):

«Սենսորային կրպակում» - ավելացվել և լրացվել է 100 անուն գիրք:

Գրադարանի կայքէջում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- * Թեզերի համընդգրկուն պահոցի (NDLTD) հետ կապի ստեղծում
- * «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտա-մեթոդական հանդեսի հետ կապի ստեղծում
- * Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոցի հետ կապի ստեղծում
- * Նորություններ, Միջոցառումներ, Նոր գրքեր, Շրջիկ գրադարան, Օրենքներ և կայքէջերի պարբերաբար թարմացում
- * ՀԱԳ-ի հրատարակությունների էլեկտրոնային տարբերակների (pdf ձևաչափ) տեղադրում
- * ՀԱԳ-ին կատարված նվիրատվությունների էջերի տեղադրում
- * «Հիշարժան տարեթվեր 2015» , «Հիշարժան տարեթվեր 2016» -ի տեղադրում
- * Տեսադարանի ստեղծում

Ընթացիկ միջոցառումներ

2015 թվականին ազգային գրադարանում կազմակերպվել է 76 միջոցառում, որից 17-ը՝ սուբսիդիայի հաշվին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում դիտել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի համատեքստում 2015թ. ապրիլի 22-23-ին Հայաստանի ազգային գրադարանի ներկայացրած «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» խորագրով ցուցադրությունը՝ նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին: Ցուցադրվել է աշխարհի 37 երկրներում 23 լեզուներով հրատարակված ավելի քան 900 միավոր գրականություն՝ տարբեր ժամանակագրական շեշտադրումներով:

Վերանորոգման աշխատանքներ

2015թ. ազգային գրադարանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գրատպության թանգարանում՝ հաշմանդամների համար նախատեսված (թեքահարթակով և բազրիքով) մուտքի կառուցում: Գրատպության թանգարանում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ցուցադրության համար նախատեսված սրահի վերանորոգում: Գրադարանի «Թամանյանական» մասնաշենքում մուտքի ալյումինե հին դռները և պատուհանները փոխարինվել են փայտյա նոր դռներով և պատուհաններով: Կառուցվել է գրադարանի «Թամանյանական» մասնաշենքի կիսանկուղային հարկի տղամարդկանց համար նախատեսված սանհանգույց: Կատարվել է գրադարանի «Վարչական» մասնաշենքի կատալոգների սրահի, սեղանագրերի և օտարալեզու գրականության համար նախատեսված ընթերցասրահների վերանորոգում: Գրադարանի «բարձրահարկ» մասնաշենքի 4, 5 և 6-րդ հարկերում կատարվել է

ջրամատակարարման անցկացում, սանհանգույցների կառուցում և նշված հարկերի աշխատասենյակների մասնակի վերանորոգում: Էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված պայմանագրով գրադարանի 2, 3 և 4-րդ մասնաշենքերում կատարվել են փայտյա հին լուսամուտների ապամոնտաժում և մետաղապլաստից նոր լուսամուտների, ինչպես նաև դռների տեղադրում: Գրադարանի 2-րդ մասնաշենքում կատարվել է ջեռուցման համակարգի տեղադրում:

Ցեղասպանության թանգարանը անհատույց տրամադրել է թվով 10 հատ ցուցափեղկ, որոնք մասնակի և ամբողջական վերանորոգվել են:

Կատարվել է թվով 50 հատ կրակմարիչների վերալիցքավորում (փորձարկումով), որոնք տեղադրվել են ընթերցասրահներում, աստիճանավանդակներում, գրատպության թանգարանում և գրապահոցներում:

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2015թ. ընթացքում համալրման բաժնի կատարած համակարգված աշխատանքների արդյունքում գրադարանի հավաքածուն համալրվել է ընթացիկ և հետադարձ գրականությամբ:

Առ 01.01.2015թ. գրադարանի ընդհանուր հավաքածուն կազմել է 6.383.478 միավոր (տես աղյ. 5):

Գրադարանային փաստաթղթերի համալրումն իրականացվում է՝

Պարտադիր օրինակի ստացումով
Գնումներով և բաժանորդագրությամբ
Նվիրատվություններով
Գրքափոխանակությամբ

2015թ. գրադարանի ընդհանուր հավաքածուն համալրվել է 39.179 միավոր գրականությամբ, որից հայերեն՝ 23.546, ռուսերեն՝ 7.685, այլ լեզուներով՝ 7.948:

Գործող հավաքածուն առ 01.01.2015թ. կազմել է 6.133.690 միավոր, առ 01.01.2016թ. կազմում է 6.163.708 միավոր:

Պահուստային հավաքածուն առ 01.01.2015թ. կազմել է 117.457 միավոր, առ 01.01.2016թ. կազմում է 117.918 միավոր:

Գրքափոխանակության հավաքածուն առ 01.01.2015թ. կազմել է 132.331 միավոր, առ 01.01.2016թ. կազմում է 137.267 միավոր:

Գրադարանի ընդհանուր հավաքածուն առ 01.01.2015թ. կազմում է 6.383.478 միավոր:

2015թ. գրադարանի ներքին շարժը կազմել է 13.988 միավոր:

Գրադարանի հավաքածուների պատկերը (տես աղյ. 7-ում):

Այսպիսով առ 01.01.2016թ. գրադարանի հավաքածուն կազմում է 6.418.893 միավոր:

Գրքային և այլ կրիչներով հրատարակությունների ստացման ենթաբաժնի միջոցով իրականացվել է գրադարանի հավաքածուների համալրումը տպագիր արտադրանքով (տես աղյ. 8):

Ենթաբաժնում տարվել են կազմակերպված աշխատանքներ գրախանութների, հեղինակների, անհատների, շուրջ 171 հրատարակչական գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ /51-հրատ., 69-խմբագր., 51-կազմակերպ/: Ընթացիկ համալրումը հիմնականում իրականացվել է ենթաբաժնում աշխատող երեք համալրողների միջոցով, որոնցից յուրաքանչյուրին ամրագրված է կոնկրետ հրատարակչություններ և կազմակերպություններ:

Հաշվետու տարում ենթաբաժնի միջոցով գրադարանի հավաքածուները համալրվել են 29839 միավոր գրականությամբ, որից նոր անուն՝ 4607:

2005թ. «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» օրենքի ընդունումից հետո ամբողջովին կարգավորված չէ պարտադիր օրինակների ստացումների գործընթացը: Բազմաթիվ հրատարակչություններ հրաժարվում են կամ մասնակի ձևով են տրամադրում օրինակներ, որի արդյունքում համալրումը կատարվում

է Եւրոպական Միությանը, գրքափոխանակության և գնման միջոցով՝ գրադարանի հավաքածուները թերի չթողնելու նպատակով:

Ենթաբաժինը համագործակցել է ինչպես գրադարանի ֆոնդապահ բաժինների, այնպես էլ Սպասարկման բաժնի հետ՝ ձեռնամուխ լինելով նրանցից ստացված 0 և 1 օրինակ գրականության մերժումների ձեռքբերմանը:

Արդյունքում լրացվել է Գրադարանի 1 օրինակ գրքեր - 463 անուն/ 713 միավոր, որից 42 անուն/83 միավորը լրացվել է Սպասարկման բաժնի ներկայացրած մերժումների ցուցակներից /լրացվածից 14-ը պատճենահանված գրքեր են, 1-ը՝ էլ.տարբերակ/:

Սպասարկման բաժնի «Յետադարձ կապ» առաջարկության թերթիկներով կազմված մերժումների ցուցակից՝ 23 պատվեր, լրացվել է 14 անուն /32 միավոր, որից 2 անուն/4 միավորը՝ պատճենահանումներ են:

Բացի ընթացիկ և հետադարձ գրականության համալրման աշխատանքներից, ենթաբաժինը աշխատել է նաև հետևյալ ուղղություններով:

* Տարեգրքերի, գրախանութների, գրավաճառ կայքերի, մանուկի միջոցով ծանոթանալով գրահրատարակչական նորություններին, կազմվել են բացակա գրքերի ցանկեր՝ ըստ հրատարակչությունների, կազմակերպությունների ու խմբագրությունների /ավելի քան 10.000 միավոր գրականության/,

* Ցանկերը ստուգվել և համեմատվել են գրադարանի գլխավոր համահավաք գրացուցակի հետ: Կազմվել են ցուցակներ գրականության ձեռք բերման համար:

Ենթաբաժինը համագործակցել է նաև Տպագիր արտադրանքի վերականգնման և հրատարակչական ծառայությունների բաժնի հետ: Կազմվել են 251 միավոր և վերականգնվել՝ 257 միավոր գրքեր /ընդհանուր թվով՝ 508 միավոր/:

Ենթաբաժնում վարվում են այբբենական, հրատարակչությունների, 0 և 1 օրինակ գրքերի քարտարաններ:

Գրականության հաշվառման ենթաբաժնում են կենտրոնացված գրադարան մուտք գործած գրականության հաշվառման, գրանցման և համապատասխան հավաքածուներ առաքելու աշխատանքները: Գրականության հաշվառումը կատարվում է ըստ գրականության արժեքի, միավորների, տեսակների, բնագավառների, լեզուների և

չափսահամարների: Գրականության հաշվառման ենթաբաժնի միջոցով հաշվառվել և գույքահամար է ստացել գրադարան մուտք գործած 39179 միավոր գրականություն, որից 29.839 միավոր գիրք և այլ կրիչներ՝ 9340 միավոր: Գրականության յուրաքանչյուր միավոր մուտքագրվում է համապատասխան մատյանում, ստանում գույքահամար, կազմվում են ուղեգրեր՝ ըստ գրադարանի հավաքածուների, ըստ լեզուների և ուղարկվում Գրականության մշակման բաժնի համապատասխան ենթաբաժիններ, այնուհետև՝ գրադարանի հավաքածուներ կամ բաժիններ: Հաշվառման ենթաբաժինը աշխատում է նաև Գրականության Մշակման և կատալոգների կազմակերպման բաժնի Խմբային և մանր նյութերի ենթախմբի հավաքածուների հետ: 2015թ. ընթացքում այդ հավաքածուից 2378 միավոր նյութեր /Մեթոդական ցուցումներ, լաբորատոր աշխատանքներ, ուղեցույցեր և այլն/ համալրման բաժնի միջոցով տեղափոխվել են համապատասխան ֆոնդեր:

Աշխատանքներ են տարվել Գրապահոցի առանց գույքահամարի գրքերի հետ: Գրքերը գրանցվել են հատուկ նոր մատյանում, ստացել հերթական գույքահամար: 2015թ. ճ.մ. գրքերից գրանցվել և ինվենտար համար են ստացել 775 միավոր գիրք:

Համալրման բաժնում 2014թ. սկսված գրականության վերագնահատման աշխատանքները շարունակվում են: Ենթաբաժնի միջոցով վերագնահատվել է 950 անուն գիրք:

Պարբերական մամուլի ստացման ենթաբաժնում կատարված աշխատանքների արդյունքում գրադարանը համալրվել է 9340 միավոր պարբերականներով, որից հանդես՝ 8182 միավոր, լրագիր՝ 1158 կազմ: Տեղական մամուլը ստացվել է «Հայմամուլ» գործակալության, խմբագրությունների, անհատների, ինչպես նաև կազմակերպությունների միջոցով: Հայրենական և ռուսաստանյան մամուլի բաժանորդագրությունը իրականացվել է «Էքսպրես Պլուս», «Վիրարեսս», «Պրես Ատտաշե», և «Պրես Ստենդ» գործակալությունների միջոցով: Ստացված մամուլի յուրաքանչյուր միավոր գրանցվել է քարտարաններում ըստ բաժինների և օրինակների, կնքվել և կազմվել են արձանագրություններ՝ ըստ ստացման աղբյուրների: Պարբերականի հաշվառումը կատարվել է ըստ գրականության արժեքի, միավորների, տեսակների, գիտության ճյուղերի և լեզուների: Պարբերականի յուրաքանչյուր միավորը

քարտարաններում ստուգելուց և գրանցելուց հետո մուտքագրվել է համապատասխան մատյաններում, ստացել գույքահամար, կազմվել ուղեգրեր և ուղարկվել համապատասխան բաժիններ:

Հայաստանում և սփյուռքում հրատարակված լրագրերի ու ամսագրերի օրինակներից մեկական ցուցակագրվել են և տրվել մատենագիտության բաժին՝ 1-2 ամսով/մատենագիտական ցանկեր կազմելու համար/: 2015թ-ին գրադարանը բաժանորդագրվել է 141 անուն պարբերական, որից 90 անուն ռուսաստանյան ամսագրեր են, 16 անունը՝ ռուսաստանյան լրագրեր, 5 անունը՝ տեղական ամսագրեր, 10 անունը՝ տեղական լրագրեր, 14 անունը՝ արցախյան լրագրեր, 4 անունը՝ արցախյան ամսագրեր և 2 անունը՝ արտասահմանյան ամսագրեր:

Պարտադիր օրինակով ստացվել է 1896 հանդես/310 կազմ, ընդամենը՝ 2206 միավոր: Նվիրատվությամբ ստացվել է 4683 հանդես/693կազմ: Ընդ որում հանդեսներից 3291տեղական հրատարակություններ են, 1392 –ը՝արտասահմանյան, լրագրերից՝ 621տեղական հրատարակություններ են, 72 –ը՝ արտասահմանյան: Ենթաբաժնի միջոցով լրացվել է 0 օրինակ ամսագիր- 126 միավոր, 0 օրինակ լրագիր- 77 կազմ: Լրացվել է Արխիվային հավաքածուում 33 միավոր և Գլխավոր գրապահուցում 144 միավոր լրագրերի պակաս համարներ: 2015 թվականին ստացվել է 87 նոր անուն ամսագիր (30 հայերեն, 17 ռուսերեն, 40 այլալեզու), 18 նոր անուն լրագիր (5 հայերեն, 10 ռուսերեն, 1 անգլերեն, 2-չինարեն):

Պահուստային գրականության ենթաբաժին

01.01.2015թ.-ի դրությամբ պահուստային հավաքածուն կազմել է 117.457 միավոր: Հաշվետու տարում գրադարանի պահուստային հավաքածու մուտք է եղել 765 միավոր գրականություն, որից՝ 678 միավոր գիրք, 27-ամսագիր, 55 կազմ լրագիր և 5 միավոր նոտա:

Առ 01.01.2016թ. դրությամբ պահուստային հավաքածուն կազմում է 117.918 միավոր:

Պահուստային ենթաբաժնում կատարվել են հայերեն և ռուսերեն հավաքածուի ընթացիկ աշխատանքներ, գրացուցակների ստուգում և համեմատում, քարտերի լրացում և խմբագրում: Ամբողջ հավաքածուն գրանցվում է էլեկտրոնային տարբերակով: Հայերեն հավաքածուից մուտքագրվել է 3277 անուն /Ա և Բ տառերը/, ռուսերենից՝4631 անուն

/A-Ու տառերը/: Պահուստային ենթաբաժնում կատարվում են նաև Գլխավոր գրապահոցի ռուսալեզու հավաքածուի բացակա միավորների ստուգման և համեմատման աշխատանքներ: 2015թ. գրապահոցի կողմից տրված քարտերից ստուգման և համեմատման արդյունքում արձանագրվել է 8 անուն գրքի գույքահամարի համընկնում և 71անուն/129 միավոր՝ առանց գույքահամարի համընկման:

Համալրման բաժինը մասնակցել է «Հայ գիրք» շտեմարանի կայքի աշխատանքներին՝ լրացնելով կայքում գրանցված ՀԱԳ-ում «բացակա» գրքերը և ջնջելով «բացակա» բառը գրքերի նկարագրության համապատասխան դաշտից:

ԳՐՔԱՓՈՒՍԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գրքափոխանակության և ցարգացման ծրագրերի բաժնի գրականության մուտքը 2015թ. եղել է 11026 միավոր գրականություն, որից գիրք՝ 8142 միավոր, հանդես՝ 1161 միավոր, ազդագիր /աֆիշա/ 330 միավոր, էլ. կրիչներ /DVD/ 44 միավոր, քարտեզ՝ 1 միավոր, բացիկ՝ 1 միավոր, բուկլետ՝ 17 միավոր, նոտա՝ 70 միավոր, օրացույց՝ 29 միավոր, պլակատ՝ 1 միավոր, մանր նյութ՝ 1230 միավոր:

Ըստ լեզուների ստացումը կազմում է.

Հայերեն՝ 8419 միավոր, որից

Գիրք՝ 5808 միավոր

Հանդես՝ 967 միավոր

Ազդագիր՝ 330 միավոր

Մանր նյութ՝ 1156 միավոր

Օրացույց՝ 29 միավոր

Բուկլետ՝ 14 միավոր

Քարտեզ՝ 1 միավոր

Էլ. կրիչներ /DVD/ 43 միավոր

Նոտա՝ 70 միավոր

Պլակատ՝ 1 միավոր

Ռուսերեն՝ 2271 միավոր, որից

Գիրք՝ 2047 միավոր

Հանդես՝ 160 միավոր
Մանր նյութ՝ 64 միավոր

Այլ լեզուներով՝ 336 միավոր, որից

Գիրք՝ 287 միավոր
Հանդես՝ 34 միավոր
Բուկլետ՝ 3 միավոր
Մանր նյութ՝ 10 միավոր
Բացիկ՝ 1 միավոր
Էլ. կրիչներ /DVD/՝ 1 միավոր

Ստացված գրականությունը ստուգվել է համապատասխան ցուցակներով, համեմատվել փոխանակության հավաքածուի քարտարանների հետ, քարտագրվել է, գրանցվել բաժնի մատյաններում և տեղադրվել հավաքածուի գրադարակներում:

Գրականության ելքը ենթաբաժնից եղել է 6090 միավոր գրականություն.

Գրականության ելքը գրադարանից /փոխանակության կամ անհատույց տրամադրման նպատակով/- 2015թ. կազմել է 6032 միավոր գրականություն, որից

Գիրք՝ 5889 միավոր
Հանդես՝ 63 միավոր
Մամուլ /թերթ «Հոգևոր Հայրենիք»/՝ 71 միավոր
Էլ. կրիչ՝ 8 միավոր
Բացիկ՝ 1 միավոր

Ըստ լեզուների ելքը կազմում է.

Հայերեն՝ 5229 միավոր
Ռուսերեն՝ 626 միավոր

Այլ լեզուներով /անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն/՝ 177 միավոր, որից գիրք՝ 176 միավոր, բացիկ՝ 1 միավոր:

Ելք բաժնից դեպի գրադարանի մյուս հավաքածուներ, կամ բաժինների աշխատանքային գրադարան /ներքին շարժ/- 58 միավոր, որից գիրք՝ /ռուսերեն / 58 միավոր:

Շրջիկ գրադարանով այցելել են 5 մարզերի 7 տարածաշրջաններ՝ Արագածոտնի մարզ՝ Արագածի տարածաշրջան, Շիրակի մարզ՝

Արթիկի տարածաշրջան, Գեղարքունիքի մարզ՝ Ճամբարակի տարածաշրջան, Լոռու մարզ՝ Թումանյանի տարածաշրջան, Լոռու մարզ՝ Գուգարքի տարածաշրջան, Սյունիքի մարզ՝ Մեղրու տարածաշրջան և Գեղարքունիքի մարզ՝ Մարտունու տարածաշրջան:

3.775 միավորը բիրլիոբուսով այցելության շրջանակներում անհատույց տրամադրվել է Հայաստանի մարզային և համայնքային գրադարաններին /որից հայերեն - 3.306 միավոր, ռուսերեն-354 միավոր, այլ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն -115 միավոր/ (տես աղյ. 9):

Հայաստանյան և արտասահմանյան գրքափոխանակություն կատարվել է 57 կազմակերպության և 29 անհատի հետ, որից

3-ը՝ ՀՀ կազմակերպություններ

54-ը՝ արտասահմանյան կազմակերպություններ

15-ը՝ ՀՀ և 1 ԼՂՀ անհատներ

13-ը՝ անհատներ արտասահմանից

Հայաստանյան և ԼՂՀ 115 կազմակերպություններին տրվել է 1846 միավոր գրականություն և ստացվել է 26 միավոր գրականություն:

Հայաստանի և ԼՂՀ 38 անհատի տրվել է 99 միավոր գրականություն և ստացվել է 212 միավոր գրականություն (տես աղյ.10): Արտասահմանյան 54 կազմակերպության տրվել է 203 միավոր գրականություն, որից 14 համար «Հոգևոր Հայրենիք» ամսաթերթից և ստացվել է 464 միավոր գրականություն (տես աղյ.11): Արտասահմանյան 13 անհատի տրվել է 109 միավոր գրականություն, որից՝ 57 լրագիր և ստացվել է 17 միավոր գրականություն (տես աղյ. 12):

Գրքափոխանակության ենթաբաժինը 2015թ. ընթացքում գրականություն է ստացել Աբխազիայից, ԱՄՆ-ից, Անգլիայից, Ավստրալիայից, Արգենտինայից, Բելգիայից, Գերմանիայից, Եգիպտոսից, Թուրքիայից, Իսպանիայից, Իտալիայից, Իրանից, Լեհաստանից, Լիտվայից, Հունաստանից, Շվեյցարիայից, Ռումինիայից, Վրաստանից, Տաջիկստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, ինչպես նաև Ռուսաստանի մի շարք քաղաքներից: Փոխարենը ուղարկվել է 66 փաթեթ՝ / որից 13 փաթեթը թերթ, 53 փաթեթը - գիրք/ , 121 միավոր գիրք, 71մ. թերթ /, որից 14-ը «Հոգևոր Հայրենիք»: Կազմակերպություններն են՝ Գերմանիայի ազգային

գրադարան - 5 մ., Լիտվայի ազգային գրադարան - 4մ., Վրաստանի Պառլամենտական գրադարան Չավչավաձեի անվան - 4մ., Դիրբոռնի, Միչիգանի համալսարան, Հայագիտական հետազոտությունների կենտրոնին / Արա Սանջյան/ - 4մ. գիրք, 57մ. թերթ., Ֆրանսիայի ազգային գրադարան -9մ., ՌԴ ազգային գրադարան - 17 մ., Բելառուսի ազգային գրադարան - 5մ., ԱՄՆ, Միչիգանի համալսարան , Հայ ուսումնասիրության և հետազոտության ազգային ասոցիացիայի գրադարան /Գևորգ Բարդակչյան/- 5մ., Անգլիա , Լոնդոնի Բրիտանական թանգարան -1մ., Լիբանան, Անթիլիասի Մ.Տ. Կիլիկյո կաթողիկոսութեան գրադարան -1մ., Իտալիա – 3մ., Իսպանիայի ազգային գրադարան- 9մ., Իրանի ազգային գրադարան - 6մ., Եգիպտոս Ալեքսանդրիայի գրադարան– 4մ., Եգիպտոս ազգային գրադարան /Սուրեն Բայրամյան/- 2մ., Ռուսաստանի Պետական գրադարան – 5մ., ԼՂՀ – 3մ., Ճապոնիայի ազգային գրադարան -9մ., Ռեբեկատանի ազգային գրադարան-6մ., Թուրքիայի ազգային գրադարան -8մ., Տաջիկստանի ազգային գրադարան -11մ.:

Բաժինը համագործակցել է նաև տարբեր հրատարակչությունների հետ և անհատույց ձեռք է բերել գրքեր ազգային գրադարանի, մարզային և համայնքային գրադարանների ֆոնդերը համալրելու նպատակով: Ընդհանուր հրատարակչություններից ազգային գրադարան է մուտք գործել 433 անուն- 16470 միավոր գրականություն:

Գրքափոխանակության շրջանակներում գրքերի նոր ցուցակ է առաջարկվել.

Բուլղարիայի ազգային գրադարան, Գերմանիայի ազգային գրադարան, Եգիպտոսի AGBU / Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն/, Թուրքիայի ազգային գրադարան, Իսպանիայի ազգային գրադարան, Իրանի ազգային գրադարան, Լիբանանի Հայկազյան համալսարանի գրադարան, Կորեայի ազգային ասամբլեայի գրադարան, Ճապոնիայի ազգային գրադարան, Ռումինիայի ազգային գրադարան, ՌԴ ազգային գրադարան, ՌԴ Պետական գրադարանին, Վրաստանի ազգային գրադարան, Վրաստանի Պառլամենտական գրադարան, Տաջիկստանի ազգային գրադարան, Ռեբեկատանի ազգային գրադարան, Ֆրանսիայի ազգային գրադարան, Արա Սանջյան /ԱՄՆ/ և համապատասխանաբար ստացվել են նոր ցուցակներ վերոհիշյալ գրադարաններից և կատարել ընտրություն:

Հայաստանի ազգային գրադարանի Գրքափոխանակության ենթաբաժնում սկսվել և ավարտվել է օտար լեզվով հավաքածուի ստուգման գործընթացը: Բաժնում առկա համապատասխան քարտարանների միջոցով ստուգվել է օտար լեզվով հավաքածուի յուրաքանչյուր անունը և միավորի առկայությունը, նույնը ավելացվել համակարգչի համապատասխան ցուցակում: Ըստ վերահաշվարկի օտար լեզվով հավաքածուն կազմում է 4.293 միավոր / անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, կորեերեն, ռուսերեն, քրդերեն, թուրքերեն, իսպաներեն, իտալերեն, թուրքմեներեն, արաբերեն, պարսկերեն, ճապոներեն/:

Բաժինը աշխատել է նաև Մշակույթի նախարարությունից ստացված մարզային և համայնքային գրադարանների մերժված գրականության ցուցակների հետ: Ցուցակները ստուգվել են գրքափոխանակության հավաքածուի քարտարաններով / 556 անուն գիրք/: Հնարավորության սահմաններում ընտրվել է 312 միավոր անհրաժեշտ գրականություն համապատասխան գրադարաններ ուղարկելու համար:

ՀՀ Մշակույթի նախարարի 26.02.2014թ. N47-Ա «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի ռուսալեզու գրադարանային ֆոնդերի հաշվառման գործընթացը ուսումնասիրելու մասին» հրամանի համաձայն, 2014թ. մարտի 3-ից սկսվել է գլխավոր գրապահոցի ռուսերեն գրքերի բացակա միավորների ստուգում-համեմատումը գրքափոխանակության ֆոնդերի հետ: Օ և բացակա օրինակները հայտնաբերելու նպատակով, բաժինը կատարում է աշխատանք Գլխավոր գրապահոցի հետ / գրապահոցի և գրքափոխանակության հավաքածուների քարտերի համեմատում /: Ստուգվել է Մշակման և կատալոգների բաժնի այբենական քարտերի 1-417 արկղերի գրապահոցի բացակա քարտերը: Արձանագրվել է գրքափոխանակության հավաքածույում գրապահոցի բացակա միավորներից 594 անուն- 954 միավոր: Ստուգվել է գլխավոր գրապահոցի ռուսալեզու հավաքածուի բացակա միավորների քարտարանը: Արձանագրվել է 55 անուն գրքի գույքահամարի համընկնում: Գլխավոր գրապահոց է ուղարկվել բացակա միավորներից 3 կազմ թերթ օտար լեզվով / եզդիերեն/:

Տպագիր արտադրանքի վերականգնման բաժին է ուղարկվել և վերականգնվել 6 միավոր գիրք:

Ենթաբաժինը կատարել է բաժին մուտք գործած նոր գրականության քարտերի տպում Չամահավաք էլեկտրոնային գրացուցակից /ALEPH/- 3234 քարտ:

Առ 01.01.2016թ. ըստ բաժին մուտք գործած և ելք արված գրականության ցուցանիշների Գրքափոխանակության ընդհանուր ֆոնդը կազմում է 137 267 միավոր, որից՝

հայերեն հավաքածուն – 85 473 միավոր,

ռուսերեն հավաքածուն – 47 501 միավոր

այլ լեզուներով հավաքածուն – 4.293 միավոր/ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, կորեերեն, ռումիներեն, քրդերեն, թուրքերեն, իսպաներեն, իտալերեն, թուրքմեներեն, արաբերեն, պարսկերեն, ճապոներեն/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժինը 2015թ. համալրման բաժնից ստացել է 41.751 միավոր գրականություն, որից 23.009 գիրք, 10.285 ամսագիր, 1.102 կազմ թերթ, 29 շարունակվող հրատարակություններ, 2.879 սեղմագիր, 688 ատենախոսություն, 1.238 CD, 2.521 ոչ գրքային հրատարակություններ:

Չաշվետու տարում հայերեն գրականության և կատալոգների կազմակերպման ենթաբաժինը ստացել է 22.189 միավոր գրականություն, որից 12. 522 գիրք, 4.971 ամսագիր, 819 կազմ թերթ, 405 սեղմագիր, 487 ատենախոսություն, 767 CD, 2.218 ոչ գրքային հրատարակություններ:

Գրքերից 3.948 միավոր ուղարկվել է ԱՅ, 18-ը՝ Չնատիպ գրականության ենթաբաժին, 193-ը՝ Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժին, 7.754-ը՝ Գլխավոր գրապահոց, 55-ը՝ Նոտային-երաժշտական գրականության բաժին, 278-ը՝ Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 40-ը՝ Մատենագիտության և գիտական հետազոտությունների ենթաբաժին, 133-ը՝ ընթերցասրահներ, 99-ը՝ աշխատանքային գրադարաններ, 4-ը՝ գրատպության թանգարան:

Այբբենական ծառայողական կատալոգում տեղադրվել է 58.300 քարտ, նույնքան՝ ընթերցողականում: Դասակարգվել է ստացված գրականությունը:

Կարգային ծառայողական կատալոգում տեղադրվել է 6.530 քարտ, նույնքան՝ ընթերցողականում: Կարգային ընթերցողական կատալոգում խմբագրվել է 10 արկղ:

2015թ. հունվարի 15-ից Յայերեն գրականության և կատալոգների կազմակերպման ենթաբաժնում սկսվել են ծառայողական և ընթերցողական այբբենական կատալոգների խմբագրման աշխատանքները: Խմբագրվել է Ա տառից 17 արկղ, Բ տառը խմբագրվել է ամբողջությամբ, Գ տառից խմբագրված է 7 արկղ: 2.167 լրացված բացակա քարտերի քանակն է ընթերցողական կատալոգում: Ենթաբաժինը կատարել է գլխավոր գրապահոցի 3.111 բացակա միավորի նշում այբբենական կատալոգում և համահավաք գրացուցակում: Նույն աշխատանքը ենթաբաժինը կատարել է ՀՀԱԳ բաժնի 495 միավորի հետ: Համահավաք գրացուցակում Հավաքածուների ֆոնդի 34 միավորին տրվել է մատենագիտական նկարագրություն, իսկ ԱԳ-ի 887 միավորին՝ էլեկտրոնային և թղթային մատենագիտական նկարագրություն:

Ենթաբաժնում մշակվել է 4.971 միավոր ամսագիր, որից 3.478-ն ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 1.325-ը՝ ՀՀԱԳ բաժին, 4-ը՝ Հավաքածուների ֆոնդ, 150-ը՝ Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին, 12-ը՝ Արև ընթերցասրահ, 1-ը՝ Նոտային-երաժշտական գրականության բաժին, 1-ը՝ հաշվապահություն:

Մշակվել է 30 նոր անուն ամսագիր և 7 նոր անուն թերթ: Մշակվել է նաև 819 կազմ թերթ:

ԿՕԽԱ գրադարանային ավտոմատացված տեղեկատվական համակարգի միջոցով մուտքագրվել է 820 անուն, 5977 միավոր թերթ և ամսագիր, ստեղծվել է 142 աղյուսակ:

2015թ. Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման ենթաբաժինը ստացել է 10.106 միավոր ռուսերեն գրականություն, որից 5.110 միավոր գիրք, 3.704 միավոր ամսագիր, 233 կազմ թերթ, 29 միավոր շարունակվող հրատարակություն, 502 սեղմագիր, 156 ատենախոսություն, 95 ոչ գրքային հրատարակություն, 277 CD: Գրքերից 3.673-ն ուղարկվել է Գլխավոր

գրապահոց, 188-ը՝ Armenica, 17-ը՝ ԱՖ, 880-ը՝ Հավաքածուների ֆոնդ, 86-ը՝ Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 13-ը՝ Սպասարկման բաժին, 11-ը՝ աշխատանքային գրադարաններ, 11-ը՝ Նոտային-երաժշտական բաժին:

Այբբենական ծառայողական և ընթերցողական կատալոգներում տեղադրվել է 6.050-ական քարտ: Դասակարգվել է ստացված գրականությունը: Կարգային ծառայողական և ընթերցողական կատալոգներում տեղադրվել է 6000-ական քարտ: Կատարվել է 720 քարտի անճշտությունների ուղղում:

Սույն թվականի նոյեմբերի 12-ից ռուսերեն A տառի 68 արկղից խմբագրվել է 34 արկղ, որի արդյունքում այբբենական ընթերցողական կատալոգում լրացվել է 6.644 քարտ, իսկ ծառայողականում՝ 701 քարտ: Ընդամենը տեղադրվել է 7.345 քարտ:

Տարվա ընթացքում ենթաբաժինը ստացել է 3.704 միավոր ամսագիր (615 կազմ), որից 1.694-ն ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 1.619-ը՝ Հավաքածուների ֆոնդ, 44-ը՝ Սատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին, 347-ը՝ ՄԱԿ:

Մշակվել է 17 նոր անուն և 29 միավոր շարունակվող հրատարակություններ: Մշակվել է 233 կազմ թերթ՝ 8.557 միավոր, որից 206-ն ուղարկվել է Գլխավոր գրապահոց՝ 8.456 միավոր, 27-ը՝ ՀՀԱԳ բաժին՝ 101 միավոր: Մշակվել է 10 նոր անուն թերթ:

KOHA գրադարանային ավտոմատացված տեղեկատվական համակարգի միջոցով մուտքագրվել է 84 անուն թերթ, 23 անուն ամսագիր և ստեղծվել է 30 աղյուսակ:

Ենթաբաժինը այլ լեզուներով 2015թ. ստացել է 9.456 միավոր գրականություն, որից 5.377 գիրք, 1610-ը՝ ամսագիր, 50-ը՝ թերթ (կազմ), 208-ը՝ ոչ գրքային հրատարակություններ, 194 CD, 1.972 սեղմագիր, 45 ատենախոսություն: Գրքերից 3.709-ը ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 8-ը՝ Գրատպության թանգարան, 186-ը՝ Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 200-ը՝ Հավաքածուների ֆոնդ, 79-ը՝ ԱՖ, 1143-ը՝ Armenica, 52-ը՝ Սպասարկման բաժին:

Այբբենական ծառայողական և ընթերցողական կատալոգներում տեղադրվել է 7.600 քարտ: Դասակարգվել է ստացված

գրականությունը: Կարգային ծառայողական կատալոգում տեղադրվել է 7800 քարտ, նույնքան քարտ ընթերցողականում:

2015թ. ապրիլի 15-ից սկսվել է Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման ենթաբաժնի այլ լեզուներով այբբենական ծառայողական և ընթերցողական կատալոգների խմբագրումը: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

2015թ. այլ լեզուներով ենթախումբը ստացել է 1.610 միավոր ամսագիր և 50 կազմ (335 միավոր) թերթ, որն ուղարկվել է Գլխավոր գրապահոց: Ամսագրերից 912-ն ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 2-ը՝ Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 4-ը՝ Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին, 644-ը՝ Հավաքածուների ֆոնդ, 48-ը՝ ՄԱԿ: Մշակվել է 23 նոր անուն ամսագիր, 34 կազմ թերթ՝ 313 միավոր, որն ուղարկվել է Գլխավոր գրապահոց:

Վերահաշվառվել է 15.639 միավոր ամսագիր, այն է՝ 574 անուն: Ինչպես նաև հայագիտական ամսագրեր՝ 11.104 միավոր՝ 648 անուն, գերմաներեն հնատիպ հազվագյուտ ամսագրեր՝ 5.144 միավոր՝ 15 անուն և 87 կազմ:

Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման ենթաբաժնի այլ լեզուներով ենթախումբը KOHA գրադարանային ավտոմատացված տեղեկատվական համակարգի միջոցով մուտքագրել է 161 անուն 637 միավոր, որից 21 անուն թերթ, 139 ամսագիր: Կազմվել է 27 աղյուսակ:

2015թ. Հեղինակավոր գրառումների և շտեմարանների կազմակերպման ենթաբաժնում ստեղծվել և մուտքագրվել է 14.341 գրքի մատենագիտական գրառում, որից 1014 մատենագիտական գրառումներին կցվել են թվային պատճենները, որոնք իրենցից ներկայացնում են 262728 թվայնացված գրքային էջ: 1.517 հեղինակավոր գրառումներ, որոնցից 1.112-ը՝ անձնանունային, 25-ը՝ աշխարհագրական, 3-ը՝ կազմակերպության անուններ, 377-ը՝ հնգալեզու թեմատիկ (անգլ., ռուս., ֆրանս., գերմ., հայ.):

2015թ. Հայաստանի գրադարանների միասնական համահավաք կատալոգում ALEPH ծրագրով մուտքագրվել է 37.304 անուն, կամ 123.103 միավոր:

Գլխավոր գրապահոցի ռուսերեն գրքերի ֆոնդից 2015թ. վերահաշվառվել է՝

1) Գիրք 151.400 անուն՝ 186.183 միավոր, որից պատճենահանված՝ 29 միավոր:

2) ա. 0 օրինակ՝ 12.678 անուն՝ 15.109 միավոր
բ. Բացակա միավոր՝ 15.781 միավոր, որոնց մեկ և ավելի օրինակներ գրապահոցի հավաքածուներում առկա են:

գ. Առանց գույքահամարի 635 միավորին տրվել է գույքահամար:

3) Ռուսերեն հանդեսներ
ա. Հրատարակված մինչև 1980թ.՝ 1.868 անուն, կամ 153.641 միավոր

բ. Շարունակվող հրատարակություններ՝ 60672 միավոր՝ (3013 անուն)

գ. Ռեֆերատային հանդեսներ (РЖ)՝ 56.743 միավոր

դ. Ամսագրեր՝ 153.641 միավոր՝ 1868 անուն

Ընդամենը վերահաշվառվել է 271.059 միավոր:

ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄ

Գրադարանի գործող հավաքածուն 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.163.708 միավոր:

Առ 01.01.2015թ. բաժնի հավաքածուն կազմել է 5.925.317 միավոր: 2015թ. բաժնի ֆոնդերը համալրվել են 24.738 միավորով, որից ուղեկցող փաստաթղթով՝ 23.886 միավոր, ներքին շարժ

(ցուցակով) 852 միավոր գրականությամբ, իսկ ակտերով՝ կից ցուցակներով համալրման բաժին է հանձնվել 2.742 միավոր:

Առ 01.01. 2016թ. գլխավոր գրապահոցի հավաքածուն կազմում է 5.947.313 միավոր, որից հայերեն հավաքածուն վերահաշվառվել է և կազմում է 555.519 միավոր:

ա) հայերեն գրքեր-285.347 միավոր, որից՝ պատճենահանված է 809 միավոր, ապակետիպ-6, լուսապատճե-1

բ) հայերեն հանդեսներ-2.040 անուն, որը կազմում է 236.900 միավոր

գ) հայերեն լրագրեր-2.021 անուն, 30.000 կազմ

դ) հայերեն մանրաժապավեններ-2.164 անուն, որը կազմում է 3.272 միավոր

Ռուսերեն հավաքածուից հաշվառվել, համալրվել և ավարտվել է 275.287 միավոր, որից պատճենահանված է 4 միավոր:

ա) ռուսերեն հանդեսներ 1980թ.-ից առ այսօր հրատարակված-2.233 անուն, որը կազմում է 200.743 միավոր, որից՝ պատճենահանված է 2 անուն, 4 միավոր

բ) ռուսերեն լրագրեր-684 անուն, որը կազմում է 17.092 կազմ

գ) ռուսերեն ռեֆերատային հանդեսներ-56.746 միավոր (ավարտվել է)

Այսպիսով՝ առ 01.01.2016թ. հայերեն և ռուսերեն հավաքածուներից հաշվառվել, համալրվել և ավարտվել է 830.806 միավոր, որից հայերեն-555.519, ռուսերեն-275.287 միավոր:

Գլխավոր գրապահոցի ֆոնդերի համալրումն ըստ հրատարակության տեսակների և լեզուների

2015թ. գրապահոցի հավաքածուները համալրվել են 24.738 միավոր գրականությամբ: Գիրք-14.282 միավոր (հայերեն-7.405 միավոր, ռուսերեն-3.168 միավոր, օտարալեզու-3.709 միավոր): Հանդես-6.113 միավոր (հայերեն-3.478 միավոր, ռուսերեն-1.694 միավոր, օտարալեզու-912 միավոր, շարունակվող հրատարակություններ-29 միավոր): Լրագիր-798 կազմ (հայերեն-542 կազմ, ռուսերեն-206 կազմ, օտարալեզու-50 կազմ): Սեղմագիր-2.308 միավոր (ռուսերեն-339 միավոր, օտարալեզու

(ուկրահներեն)-1.969 միավոր): ՄԱԿ-385 միավոր (ռուսերեն հանդեսներ-348 միավոր, օտարալեզու հանդեսներ-37 միավոր):

Ներքին շարժը ցուցակներով կազմում է – 852 միավոր, որից (հայերեն գրքեր-347 միավոր, ռուսերեն գրքեր-50 միավոր, ՄԱԿ-ի ռուսերեն գրքեր-455 միավոր):

Բոլոր նոր ստացվող հայերեն և ռուսերեն լեզուներով գրքերը կնքվել և գրանցվել են համապատասխան ենթաբաժինների գույքամատյաններում, դասդասվել և տեղադրվել գրադարակների վրա: Լրագրերը և հանդեսները գրանցվել են մանուլի ենթաբաժնի քարտարաններում, իսկ 23 նոր անունների համար գրվել են քարտեր, կնքվել և տեղադրվել գրադարակների վրա: 2015թ. համալրման բաժնի միջոցով՝ հետադարձ համալրումով լրացվել է հայերեն լրագրերի բացակա համարները: Այն կազմում է 11 ակտ:

2015թ. գլխավոր գրապահոց մուտք է գործել 81.438 պատվիրաթերթիկ: Բավարարվել է 80.687-ը, որից՝ 4.812-ը զբաղված են եղել ընթերցասրահներում և բավարարվել են տեղում, իսկ 213-ը բավարարվել են ՀՀԱԳ բաժնում: 2014թ. ՀՀԱԳ բաժին է ուղարկվել 1.484 պատվիրաթերթիկ, 2015թ. կրճատվել է մոտ 7 անգամ: Նախորդ տարիներին ընթերցողական կատալոգների ենթաբաժինը անձեռնմխելի գրականության բաժնին ուղարկված պատվիրաթերթիկները ընդունում էր և ուղարկում տացքակետեր, որտեղից, որպես բաժնի մերժում ընթերցասրահներին էին ուղարկվում և ընթերցողները կրկնակի պատվիրաթերթիկ էին լրացնում անձեռնմխելի գրականության բաժնի ընթերցասրահից օգտվելու համար: 01.09.2014 թ.-ից սկսած սպասարկման բաժնում կատարվել են աշխատանքային անձեռնմխելի գրականության բաժնի սպասարկման հետ կապված փոփոխություններ՝ ընթերցողական կատալոգների ենթաբաժնում պատվիրաթերթիկները ստուգելուց հետո անձեռնմխելի գրականության բաժնում գտնվող գրականության պատվիրաթերթիկներն անմիջապես ուղարկվում են սպասարկման անձեռնմխելի գրականության բաժին, որի արդյունքում ընթերցողն արագ սպասարկվում է:

Մերժվել է 751 պատվիրաթերթիկ, որից՝

- Տեղում չկա 60 պատվիրաթերթիկ, որից 8-ը կրկնվել է
- Գրադարանում չկա 16 պատվիրաթերթիկ
- 675՝ մեկ օրինակ է

Մերժված պատվիրաթերթիկների հիման վրա կազմվել են ցուցակներ և հանձնվել համալրման բաժին՝ հետադարձ համալրման համար:

Սպասարկված գրականության տացքն ըստ լեզուների

- Հայերեն-63.806 միավոր, որը կազմում է սպասարկված պատվիրաթերթիկների 79%-ը
- Ռուսերեն-13.925 միավոր, որը կազմում է 17%-ը
- Օտարալեզու-2.956 միավոր, որը կազմում է 3,1%-ը

Գրականության տացքն ըստ հրատարակությունների տեսակների

- Գիրք-67.508 միավոր
- Հանդես-6.844 միավոր
- Լրագիր-5.958 կազմ
- Շարունակվող հրատարակություններ-288 միավոր
- Սեղմագիր-66 միավոր
- Մանրաժապավեն-23 միավոր

Բաժին մուտք գործած պատվիրաթերթիկների 99,1%-ը բավարարվել է, մերժվել է 0,9%-ը: 2015 թվականից պատվիրաթերթիկները ընթերցողական կատալոգների ենթաբաժնում ստուգվում են ALEPH էլեկտրոնային համահավաք քարտարանով և այն պատվերները, որոնք գրադարանում չկան անմիջապես տեղում չեն ընդունվում, փոխարենը ընթերցողը լրացնում է «հետադարձ կապի» թերթիկը, որտեղ նշում է այն գրքի տվյալները, որը գրադարանում չկա և ինքը կցանկանար կարդալ: Թերթիկում լրացվում են նաև ընթերցողի տվյալները: Սպասարկման բաժինը «հետադարձ կապի» թերթիկից

կազմված ցանկ է ներկայացնում համալրման բաժին տվյալ գրքերը ձեռք բերելու՝ ընթերցողի կողմից պահանջվող անհրաժեշտ գրականությանը ժամանակին գրքային ունեցվածքը համալրելու համար:

Բաժնի վերադարձը կազմել է 80.687 միավոր, որից ներքին վերադարձը՝ 4.194 միավոր սպասարկվել է գրադարանից դուրս՝ բաժնույթների բաժնի միջոցով՝ ներքին միջգրադարանային և անհատական պատվիրաթերթիկներով: Գրականության դասդասում և տեղադրումը կազմել է-171.200 միավոր, որից՝

- Բաժնի վերադարձը-80.687 միավոր
- Ֆոնդերի համալրում-24.738 միավոր
- «ALEPH» ծրագրով մուտքագրման համար հանձնված և ետ ստացած գրականություն-57.580 միավոր
- Տպագիր արտադրանքի վերականգնման բաժին հանձնված և ետ ստացած գրականություն-8.195 միավոր

Գրականության ստուգում-տեղաշարժը կազմել է 513.500 միավոր: Գրադարանների վրա տեղադրված գրականության առկայության և ճշտության ստուգումը կազմել է 353.500 միավոր, լրացվել է -34.700 ֆորմուլյար, նորոգվել է - 9.250 գրքի պիտակ: Բաժնի գույքամատյաններում գրանցվող հայերեն գրքերին փակցվել է 79.534 համարային պիտակ:

Գրականության անվանական վերահաշվառում

ՀՀ մշակույթի նախարարի 26.02.2014թ. թիվ 47-Ա հրամանի համաձայն 2014թ. մարտի 3-ից սկսվեց գլխավոր գրապահոցում պահպանվող ռուսալեզու գրքերի, հանդեսների, լրագրերի և մանրաժապավենների հաշվառման գործընթացը:

2015թ. հաշվառվել է-508,480 միավոր, որից՝

ա) Գրքեր-151.400 անուն, որը կազմում է 186.183 միավոր, որից պատճենահանված է-29 միավոր:

Գրքերի ստուգման և հաշվառման աշխատանքները շարունակվում են:

բ) հանդեսներ-271.059 միավոր:

1. մինչև 1980 թ-ը հրատարակված-153.641 միավոր

- 2. ռեֆերատային հանդեսներ-56.746 միավոր(ավարտված է)
- 3. շարունակվող հրատարակություններ-60.672 միավոր
 - գ) լրագրեր-ըստ նախատեսված ժամանակացույցի՝ առ 01.12.2014թ. ավարտվել է ռուսերեն լրագրերի հաշվառումը, այն կազմել է 684 անուն, 16.886 կազմ:
 - դ) ըստ նախատեսված ժամանակացույցի՝առ 01.12.2014թ. ավարտվել է հաշվառումը, այն կազմում է 639 անուն, 706 միավոր

Այսպիսով 2015թ. բաժնուն վերահաշվառվել են՝

- ա) ռուսերեն գրքեր-217.812 միավոր
- բ) հանդեսներ-290.668 միավոր, որից
 - 1. մինչև 1980թ. հրատարակված -173.250 միավոր
 - 2. շարունակվող հրատարակություններ-60.672 միավոր
 - 3. ռեֆերատային հանդեսներ-56.746 միավոր

Ընդամենը՝ 508.480 միավոր, որից գիրք՝ 217.812 միավոր, մամուլ՝ 290.668 միավոր:

2015 թվականից մամուլի ենթաբաժնուն կատարվում է օտարալեզու հանդեսների ստուգում-հաշվառում: Ստուգվել է 1.562 անուն, որը կազմում է 56.334 միավոր: Ստուգման աշխատանքները ենթաբաժնուն շարունակվում են:

Շարունակվում է գլխավոր գրապահոցի ֆոնդերի մուտքագրման աշխատանքները Հայաստանյան գրադարանների միասնական համահավաք գրացուցակում ALEPH ծրագրով 2015 թվականին մուտքագրվել են ռուսերեն գրքեր՝ 51.157 միավոր, օտարալեզու գրքեր՝ 1.519 միավոր, ռուսերեն հանդեսներ՝ 4.631 միավոր, օտարալեզու հանդեսներ՝ հայագիտական՝ 273 միավոր: Ընդամենը՝ 57.580 միավոր:

Բաժնուն փոշեհանվել է 755.500 միավոր գրականություն:

Տպագիր արտադրանքի վերականգնման բաժնին է հանձնվել 8.195 միավոր: 2015 թվականին վերականգնվել է 18 գրքի և մեկ հանդեսի 510 էջ:

ՀՀ ազգայի գրադարանի 18 հուլիսի 2012 թվականի N 90-Ա 3 հրամանի համաձայն 2012 թվականի հուլիսի 20-ից սկսվել է գլխավոր գրապահոցի հայերեն և ռուսերեն լեզուներով գրքերի մատյանային

գրանցումը: 2015 թվականին գրանցվել է 79.534 հայերեն գրքեր, իսկ ռուսերեն մատյանային գրանցումը վերահաշվառման հետ կապված 2014 թվականից ժամանակավորապես դադարեցվել է: Մատյանային գրանցման աշխատանքները շարունակվում են:

Բաժնուն պարբերաբար կատարվում է սպասարկված բջիջների՝ հիմքերի ստուգում, ճշտում գրապահոց չվերադարձված ժամկետանց միավորները և ետ պահանջում: Ստուգումներ են կատարվում սպասարկման, բաժնույթների, միջոցառումների և մյուս բաժինների հետ:

ՀՆԱՏԻՊ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի հավաքածուն առ 01.01.2016 թվականի դրությամբ կազմում է 365.686 միավոր: Իսկ 01.01.2015 թվականի դրությամբ կազմել է 356.790 միավոր:

